



V BENTONITE

ԱԿՏԻՎԱՑՎԱԾ ՆԱՏՐԻՈՒՄԻ ԲԵՆՏՈՆԻՏ



ԲԱՂԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Բարձր մաքրության ակտիվացված բենտոնիտ:



ԲՆՈՒԹԱԳԻՐ

V BENTONITE-յ բարձր մաքրությամբ նատրիումային բենտոնիտ է, որն ընտրված է լավագույն և շատ մաքուր մոնոմորֆիլոնիտի միներալներից: Հարմար է նստվածքային եղանակով պարզեցման գործընթացների համար: Այն փոշու տեսվով է, ունի սպիտակավուն գույն և անհոտ է: Նատրիումային ակտիվացման գործընթացը բենտոնիտին ապահովում է բարձր ղեպրոտեինացնող և ուռչելիության հատկանիշներ: Մանրացման գործընթացը թույլ է տալիս ջրում կանոնավոր կլանումը առանց չլուծվող կտորներ թողնելու: Պարզեցման ընթացքում նյութը նստում է՝ ձևավորելով կոմպակտ նստվածք:



ԿԻՐԱՌՈՒՄ

V BENTONITE-ը հիմնականում օգտագործվում է գինիների և խաղողանյութերի մաքրման ավանդական գործընթացներում, քանի որ այն ունի ուժեղ պարզեցնող հատկություն: Նրա՝ պրոտեինի հեռացման միջինից բարձր հատկությունը (OIV մեթոդով) նույնպես արդյունավետ է պրոտեինային անկայուն գինիների, քացախի և մրգային հյութերի կայունացնող պարզեցման համար:

V BENTONITE օգտագործելիս պահպանեք գործող համապատասխան իրավական կարգավորումները:

CHIARIFICANTI



V BENTONITE

ԱԿՏԻՎԱՑՎԱԾ ՆԱՏՐԻՈՒՄԻ ԲԵՆՏՈՆԻՏ



ԿԻՐԱՌՄԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

V BENTONITE-ը լուծեք ջրի մեջ 1:10-15 հարաբերակցությամբ՝ անընդհատ խառնելով, որից հետո թողեք մի քանի ժամ ուռչի: Այնուհետև ավելացրեք գինու մեջ, որպեսզի այն մանրակրկիտ մշակվի և համասեռանա:

Սպիտակուցային ծագում ունեցող այլ հստակեցնող նյութերի (այսինքն՝ ժելատին և այլն) հետ համակցված մշակման դեպքում խորհուրդ է տրվում V BENTONITE մշակմանն անցնել ժամանակային առումով վերջին հերթին: Ընդհանուր առմամբ, պարզեցման արդյունքները բարելավելու համար, մենք առաջարկում ենք «առցանց» դոզավորման համակարգեր, ինչպիսիք են, օրինակ՝ JU.CLA.S-ի կողմից DOSACOM®-ը:



ԴՈՉԱՎՈՐՈՒՄ

30-ից to 60 գր/հլ ֆաղդողանյութերի և երիտասարդ գինիների պարզեցման համար:

30-ից 150 գր/հլ խաղողանյութերի, գինիների և հյութերի պարզեցման համար:

Պրոտեինի անհրաժեշտ կայունացում և ցանկալի հստակեցնող արդյունք ձեռք բերելու համար իրականացվում են համապատասխան լաբորատոր փորձարկումներ (օրինակ՝ BENTOTEST՝ պրոտեինի կայունությունը գնահատելու համար կամ, ինչը նույնիսկ ավելի ցանկալի է, մեր գիտահետազոտական դեպարտամենտի կողմից պատրաստված PROTEOTEST® միջոցով)՝ առավել համապատասխան չափաբաժինը որոշելու համար:



ՓԱԹԵԹԱՎՈՐՈՒՄ

25 կգ պարկեր:



ԴԱՅԵՍՏԱՎՈՐՈՒՄ

Պահել զով, չոր տեղում, լույսից հեռու: Չգուշորեն կնքել բաց պարկերը:



ՎՏԱՆԳ

Եվրոպական գործող կանոնակարգերի հիման վրա արտադրանքը դասակարգվում է. ոչ վտանգավոր: